ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

19. 05. 2023 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 14-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցման II կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների, ստուգումների ու ստուգարքների և ամառային քննաշրջանի ժամանակացույցների հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. Հեռակա ուսուցման «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի ավարտական թեզերի թեմաների հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. 2023-2024 ուստարվա ուսումնական պլանների քննարկում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
4. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթին Վահան Աղաբաբյանի մասնակցության վերաբերյալ (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցման II կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունները, ստուգումները և ստուգարքները, ըստ հաստատված ժամանակացույցի, անցկացվելու են ս.թ. մայիսի 23-27-ն ընկած ժամանակահատվածում: Բոլոր ժամանակացույցներն ուղարկվել են մասնագիտական ամբիոններ, ըստ դասախոսների և ուսանողների առաջարկների՝ կատարվել են փոփոխություններ, և այժմ դրանք պատրաստ են հաստատվելու համար:

2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ամառային քննաշրջանը, ըստ հաստատված ժամանակացույցի, անցկացվելու է ս.թ. հունիսի 6-24-ն ընկած

ժամանակահատվածում: Ամբիոններում համապատասխան փոփոխությունների ենթարկվելուց հետո ժամանակացույցն այժմ պատրաստ է հաստատման համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտներ Ա. Ավագյանը, Ք. Հարությունյանը, Կ. Պողոսյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հավանություն տալ 2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցման II կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների, ստուգումների ու ստուգարքների և ամառային քննաշրջանի ժամանակացույցներին և ուղարկել փոխտնօրենի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի մասին ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը նշեց, որ 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի առաջին կուրսի ուսանողների համար մասնագիտական ամբիոնների կողմից առաջարկվել են ավարտական թեզերի թեմաներ: Դրանք, համաձայնեցվելով «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար, մ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Հմայակի Պետրոսյանի և մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարների հետ, ներկայացվել են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել հեռակա ուսուցման «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի ավարտական թեզերի թեմաները և ներկայացնել Ուսումնամեթոդական վարչություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Կ. Պողոսյանը նշեց, որ 2023-2024 ուստարվա ուսումնական պլանները, համաձայնեցվելով դասախոսների հետ, վերանայվում են կրթական ծրագրերի ղեկավարների կողմից: Ուսումնական պլանների վերանայման

աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հանձնարարել կրթական ծրագրերի ղեկավարներին 2023-2024 ուստարվա ուսումնական պլանները սեղմ ժամկետներում ավարտուն տեսքի բերել՝ հաստատման ներկայացնելու համար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ զեկուցող Կ. Պողոսյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հայտարարված «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթին այս տարի Հումանիտար գիտությունների ֆակուլտետից դիմել է 1 դասախոս՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Վահան Արշակի Աղաբաբյանը, ով սահմանված կարգով մրցութային հանձնաժողովին է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտներ Ա. Ավագյանը, Լ. Թումանյանը, Հ. Վանյանը, Ք. Հարությունյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը՝ ողջունելով մրցույթին Վ. Աղաբաբյանի մասնակցությունը և մաղթելով հաջողություն:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթին Վահան Աղաբաբյանի մասնակցության վերաբերյալ Կ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Վանյան